Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի խոսքը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ (24.04.2022 թ.)

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,

107 տարի է, որ հայ ժողովուրդն ապրիլի 24-ին ոգեկոչում է Հայոց ցեղասպանության բազմահազար զոհերի հիշատակը: Այս օրը հայ ժողովրդի ինքնության այն կարևորագույն ու եզակի տարրերից է, որն անտեսանելի թելերով միավորում է բոլոր հայերին, ովքեր, միահամուռ կերպով իրենց բողոքի ձայնը բարձրացնելով Օսմանյան Թուրքիայի մերժողական քաղաքականության դեմ, ուղերձ են հղում միջազգային հանրությանը՝ ճանաչել և դատապարտել 20-րդ դարասկզբի եղեռնագործությունը՝ դրանով իսկ թույլ չտալով ցեղասպանությունների կրկնությունն ամբողջ աշխարհում:

Հարգանքի տուրք մատուցելով ու խոնարհվելով միայն հայ լինելու համար սպանված և արդեն սրբադասված միլիոնավոր նահատակների հիշատակին, որպես ցեղասպանություն վերապրած ու վերածնված ժողովուրդ՝ գիտակցում ենք, որ վերապրողների ժառանգներիս պարտքն է համախմբվել ու հավատարիմ մնալով ազգային արժեքներին՝ կերտել մեր ազգի արժանապատիվ ներկան ու ապագան:

Հարատև խաղաղություն և նորանոր ծնունդներ եմ մաղթում հայ ժողովրդին՝ ցանկանալով, որ ներկա սերունդն այսուհետ կերտի միայն նոր հաղթանակներ:

Հավերժ խոնարհում անմեղ զոհերի վառ հիշատակին:
Աստված պահապան Հայոց հողին ու հայ ժողովրդին: